



## Պ Ե Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Փ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐ

ԱՐԵՆԱՑՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ԵՒ ՎԵԴԱՐԻ ԽԱՉԻ

Մենք նիկոլայ երկրաբդ Պայսը և Ինքնակալ  
ամենայն Թուստատանի, Մոռկուայի, Կիէվի, Վլա-  
գիմիրի, Նովգորոդի, Թագաւոր Կազանի, Թագա-  
ւոր Աստրախանի, Թագաւոր Լենաց, Թագաւոր  
Սիրիրի, Թագաւոր Տաւրեան Գերտնէսի, Թա-  
գաւոր Վրաց, Թագաւոր Պոկովի և Մեծ Իշխան  
Սմօլէնսկի, Լիտվայի, Վոլինի Պոզոլի և Ֆիլան-  
դիայի: Իշխան Էստլանդիայի, Լիֆլանդիայի,  
Կուրլանդիայի և Սիմֆոնիրի, Բելօստո-

կի, Կօրելի, Տվէրի, Իւգօրի, Պերմի, Վեատկայի, և ալլոց Թագաւոր և մեծ Իշխան Նովգորոդի, Ներքին Երկիրների, Զերնիգովի, Ռեազանի, Պոլոցկի, Բուստովի, Եարոսլաւի, Բելօգէրսկի, Ռուզորսկի, Օբորսկի, Կոնդիյսկի, Վիտեբսկի, Մատիոլաւսկի և բոլոր հիւսիսային երկրների. Հրամայող և Թագաւոր Իվէրիական, Քարթալինական և Կաբարդինեան երկրների և Հայկական նահանգի, Զէրկաստան և լիոնային Իշխանների և այլոց ժառանգ Թագաւոր և Տէր: Թագաւոր Թուրքաստանի, Ժառանգ Նորվէգիայի, Հէրցոգ Ջէզզիգ-Հոլշտայնի, Ստորմարկի, Անտմարտէնի և Օլդէնբուրգի և այլ և այլ:

Անսալով Հայ ժողովրդի մեծամասնութեան ցանկութեան, որ արտայայտուեց Էջմիածնում 1908 թուի նոյեմբեր 1-ին, Մենք հաստատում ենք Կոստանդնուպոլսի Հայ-Լուսաւորչական պատրիարք Մատթէոս առքեալիսկոպոս Իզմիրլեանին Էջմիածնի պատրիարքի ամենայն Հայոց Կաթուղիկոսի աստիճանում, և յանձնարարելով նորա առանձին հոգատարութիւն ճշտիւ պահել ներկայումս Կայսրութեան մէջ ներգործող և այսուհետեւ հրատարակուելիք բոլոր օրէնսդրութիւնները Հայ Լուսաւորչական եկեղեցու գործերը կառավարելու մասին, հաստատ յոյս ունինք որ այս պատրիարքը նախանձախնդրութեամբ կաշխատի արդարացնել մեր այս Կայսերական վստահութիւնը:

Տրուած է Յարսկօէ-Մէլօյում ապրիլ 15. Քրիստոսի  
Ծննդեան հաղար ինն հարիւր ինը թուին և մեր թագաւ-  
ռորութեան տասն և հինգերորդ տարում։  
Խիականի վրայ Նորին Կալսերական Մեծութեան ձեռքով սուրա-  
գրած է

## ՆԻԿՈՂԱ

Ներքին գործերի Մինիստր Ստատու սեկրետար Ստուիլին

**ԷԶՄԻՍԾՆԻ ՄՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՊՈՏԲԻՍՐՔ**  
**ԿԱԹՈՒԴԻԿՈՍ ՄՍՏԹԵՈՍԻՆ**

Զեր երկարժամանակեայ հոգեոր ասպարէզը գրա-  
ւել է դէպ Զեղ վստահութիւնը, Զեղ այժմ էջմիածնի  
Պատրիարք—Կաթողիկոսի պաշտօնին ընտրող հայ ժո-  
ղովրդի։

Տեսնելով Զեր հօգուապետական իշխանութեան մէջ  
Զեր իրաւասութեան ենթակայ հոգեորականութիւնը պատ-  
շաճ կերպով զեկովարելու առհաւատչեան և ամեն ա-  
ռօղորմած աբար չնորհելով Զեղ վեղարի վերայ կրելու  
ապամանդեայ խաչ, որ հաւատի սրաբազան նշանն է և  
Քրիստոսական բոլոր եկեղեցիների հովիւներին ոգեսորողը,  
ապաւինում եմ՝ Տիրոջ օգնութեանը. որ զօրացնէ Զեր  
պաշտօնավարութիւնը մեր պետութեան բարւոյն և սրա  
հետ սերտ շաղկապուած բոլոր հայ ժողովրդի օգտի համար։

Ցանձնելով Ինձ Զեր աղօթներին մնամ առ Զեղ բարեհան  
ՆԻԿՈՂԱՑ

Նախարար Ներքին Գործոց Ստատու—Սեկրետար Սաօփափն

1909 թ. Մայիսի 29.

Ա. ՊԵՏԵՐՔ

**ՀԵՌԱԳԻՐՆԵՐ**

Ն. Կ. ՄԵԾՈՒԹԻՒՆՆԸ բարեհաճել է Պօլտաւայից պա-  
տասխանել նորին Սրբութեան հեռագրին հետեւալը.

Եղմիածին 29 յունիսի. Պատրիարք Կաթողիկոսի  
Ամենայն Հայոց Իզմիրլեանին

Ի սրտէ շնորհակալ եմ Զեղնից Զեր աղօթքների և  
բարեմաղթութիւնների առիթով Ինձ և ամբողջ ընտանի-  
քիս համար։

### Խեկալանի վրայ սուրագրած է ՆիկոԼԱՅ։

Վեհափառ Հայրապետը ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵ-  
ԾՈՒԹԵԱՆ հեռագրել էր հետեւեալը. Պօլտավա 29 յու-  
նիսի, ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, Հասնելով իշ-  
միածնի Նախաթոռ Տաճարը, վերառաքեցի Զերմագին  
աղօթքներ առ Ամենաբարձրեալն Զերդ Մեծութեան, Թա-  
գուհի-Կայսրուհիների, կայսերազն ժառանգի և ամբողջ  
Օգոստափառ ընտանիքի համար։ Ընդ սմին Պօլտաւեան  
յաղթութեան երկու հարիւր ամեակի հանդիսաւոր տօնի  
առիթով մաղթում եմ յաւիտենական յիշատակ ՊԵՏՐՈՍ  
ՄԵԾ ԹՌԴՊՈՒՐԻՆ և քաջարի զինւորներին, որոնք իրանց  
կեանքը զոհեցին թագաւորի և Հայրենիքի համար։

Ընտրեալ եւ հասաւատեալ Պատրիարք Կաթողիկոս  
ամենայն Հայոց ՄԱՏԹԵՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ։

### ԵՐՉԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ

Կամօքն Բարձրելոյն և շնորհիւ Ողորմած Կայսերն  
Ուռաց Նորին Սրբութիւն Վեհափառ Կաթողիկոսն ող-  
ջամբ ժամանելով ի Մայր Աթոռս և առաջի Միածնաէն,  
սեղանոյ վերառաքեաց զներմագին աղօթս առ Միածնին  
Որդին վասն քաջառողջութեան Թագաւոր Կայսեր, պայ-  
ծառութեան Հայաստանեայց եկեղեցւոյ և բարօրութեան  
Հայկագեան ժողովրդեան։

Տեղակալ՝ Գեւորգ Արքեպիսկոս.

**Ասոյ** Սրբազն Կաթուղիկոս Տ. Սահակ և Կ. Պօլսոյ  
պատրիարք Տ. Եղիշէ Եպիսկոպոսը ուղղել են Վեհափառ  
Հայրապետի անուան հետևեալ հեռագիրները.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ

Ի Ա. Էջմիածին.

Մեծ վշտերի մէջ գտնուող մեր ժողովուրդը մխիթա-  
րուեցաւ՝ երբ Անտիոքի մէջ ստացանք Տեղակալի հեռագի-  
րը, որով Զեր ի Ա. Էջմիածին ժամանումը կը ծանուցուի-  
րը. Զեր Ա. Լուսաւորչի Գահը բարձրանալը յաջողու-  
թեան և երջանկութեան սկզբնաւորութիւն թող լինի Հայ-  
մարտիրոս եկեղեցու համար:

ՅՈ ՅՈՒԺԻ 1909 ՀՈՒՅԱ-

Սահակ Կաթուղիկոս Կիլիկիայ.

ՆՈՐԻՆ ՄՐԲՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԷջՄԻԱԾԻՆ  
կումկապու. Մեծ ուրախութեամբ տեղեկացայ Սու-  
րէնեան արքեպոսի. և Զերազի հեռագրերից Զեր Սրբու-  
թեան հայրապետական Ա. Աթոռ հասնելը, թող Աստուած-  
զորացնէ Զեր ջանքերը ի բարգաւաճումն մեր եկեղեցւոյ-  
Պատրիարք Դուռեան.

ՊԱՏՃԵՆ

Ի Սինօդն Սրբոյ Էջմիածնի

Նորին Վեհափառութիւն Սրբազնագոյն Հայրա-  
պետըն ազգիս ծանոյց մեզ, եթէ Տեառն յա-  
ջողութեամբ կամի ընդունել զհայրապետական օ-  
ծումն ի 13-րդ աւուր յառաջիկայ Սեպտեմբեր  
ամսոյ յաւուր տօնի Վերացման սրբոյ խաչի, ուս-  
տի և բարեհաճեցաւ պատուէր տալ մեզ առնել  
զիրատշան տնօրինութիւն:

Զբարեհաճ կամաց Վեհափառ Հայրապետի  
ազգիս տալով գիտել Սինօդիդ, առաջազդրեմբ  
վութով տնօրինել զարժանն:

ՏԵՂԱԿԱԼ ԳԵԽԱԳ ԱՐԵԽԱՊԻԱԿԱՊ

Փոխարքայի թուղթն առ Ամեն. Տ. Տեղակալն.

Ի հետեւումն սոյն տարուայ մարտի 7-ի № 869 Զեր գրութեան, ես յարաբերութեան մէջ մտայ Ներքին Գործոց Նախարարի հետ ներկայ տարուայ գարնանից սկսած մի տարի ևս երկարացնելու անցեալ տարի թոյլատրուած ժողովարարութիւնը յօդուտ Տաճկահայաստանի սովելոց Այժմ Ստատո-Սեկրետար Ստոլիպինը յայտնում է ինձ, որ նա թոյլատրում է երկարել յիշեալ ժողովարարութիւնը մի տարի ևս նոյն հիմունքներով, ինչպէս այդ թոյլատրուած է եղել առաջ.

Յայտնելով այս մասին Զերդ Բարձր Սրբազնութեան, պատիւ ունիմ յայտնել, որ ևս յօդուտ գործի խիստ կարեար եմ համարում, որ տեղական կենդրունական իշխանութիւնը իր ժամանակին աեղեակ լինի ինչպէս ստացուած նուիրաբերութիւնների, նոյնպէս էլ նոյն գումարների մասին, որոնք Յանձնաժողովի միջոցով կուղարկուեն Կ. Պոլսի Ռուսական Կայսերական գեսպանին, Այդ պատճառով ես անհրաժեշտ եմ համարում խնդրել Զերդ Բարձր Սրբազնութիւնից հարկաւոր կարգադրութիւններն անել, որ յիշեալ Յանձնաժողովը պարբերաբար գումարների ժողովման և ըստ պատկանելոյն ուղարկելու մասին ներկայացնի ինձ զեկուցանելու համար յիշեալ տեղեկութիւնները, նոյնպէս և հաղորդի ամենամանրամասն հաշիւայդ Յանձնաժողովի անցեալ ժամանակի գործունէութեան մասին:

Հայցելով Զեր ազօթքները, խորին յարգանաց զգացմունքով և կատարեալ անձնուիրութեամբ պատիւ ունիմ լինել Զերդ Բարձր Սրբազնութեան

№ 11956

Խոնարհ ծառայ Կոմս Վորոնցով-Դասկով

31-ն Մայիսի 1909 ամիս 10:00 ա.մ.

Տ. Փ. Խ. Հ. Ա.

ՔԱՂԱԿԱԾՔ ՅՈՐՍԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԻՆՈՒԻ

---

— 18 Մայիսի. Սինօդ լուեալ զյայտարարութիւն Վաշինգտոն կառավարութեան վասն հարկաժողով Արտէնի Տէր Պօղոսեանց և օգնականաց, հրամայեաց. նախ կարդել ի պաշտօն հարկաժողովի Վաղարշապատ գեղջ զԴառնիկն Տէր Թագէոսեան ի ժողովել զծխահարկս, զայգեհարկս, զվարձադրամս կրպակացն ի Վաղարշապատ, զբահրայն ցուրենոյ, գարւոյ, առւոյտի և բամբակի և զապառիկս հարկացն. Ժամանակ պաշտօնավարութեան հարկաժողովին սահմանի ց 1-ին ապրիլի 1910 ամի, ի վարձ վասն պաշտաման ունի Տէր Թագէոսեանն ընդունել միայն ի ժողովեալ այգեհարկաց, ծխահարկաց և վարձադրամոց կրպակացն զ  $10\%$ . Ի վերջ իւրաքանչիւր ամսոյ հարկաժողովն պարտի առաջի առնել Վանական կառավարութեան գհաշիւ գործունէութեան իւրոյ և զժողովեալ դրամն, զոր ապա կառավարութիւնն յատուցանելոց է ի Սինօդու Վանական կառավարութեանն յանձն լինի հսկողութիւն ի վերայ գործունէութեան հարկաժողովի և յամսոյ ամիս զեկուցանել զայնմանէ Առենիս և երկրորդ՝ թոյլ տալ Վանական կառավարութեան վարձել զՄկրտիչն Տէր Նազարեան ի սուրհանդակ հեծեալ և զԳրիչն Թահլաբաշեան և զՄարտիրոսն Յովհաննիսեան ի հետեակ սուրհանդակս, տալով նոցա ոռճիկ ըստ նախահաշւոյ, թ. 285.

— 20 Մայիսի. Սինօդ լուեալ զիսնդիր Մկրտիչ Սարկաւագի Մուրագեան, վասն նպաստելոյ ինքեան 50 ոռւրշօք առ ամիս առ ի շարունակել զուսումն յարտասահմանի, հրամայեաց. Քանզի ըստ օրագրական վճռոյ Սինօդիս ց 31 յուլիսի անցելոյ ամի թ. 591 սահմանեալ է Մկրտիչ Սարկաւագի նպաստ ի Կոնսիստորիայէն Երևանայ յամիսն 40 ոռւրշիս ց 1 յուլիսի տարւոյս, իսկ վասն շարունակելոյ զնպաստն ոչ գոն ազատ գումարք ի Կոնսիստո-

րիային Բեսարաբիոյ, ուստի զինդիր Մկրտիչ Սարկաւագի յ 2 մայիսի տարւոյս թողուլ առանց հետեանաց։ թ. 296.

— Ի նմին աւուր Սինօդ լուեալ զգործ կրկնամուսնաւթեան ընակչի Զամիաթ գեղջ գաւառին Շուշւոյ Ներսիսի Յովաէփեան Սարգսեանց ընդ այրի Զանազանի Յարութիւնեան, Հրամայեաց. Զյանցաւորս ըստ գործոյս և զմեղուակիցս յանձնել ի գատ մարմնաւոր իշխանութեան ըստ 1554, 1556 և 1557 յօդ. պատժ. օրինաց ի ձեռն դատախազի նահանգական դատարանին Բագոււոյ։ թ. 295.

— Ի 22 մայիսի. Սինօդ լուեալ զյայտարարութիւն Գիւղատնտեսի ագարակի Մ. Աթոռոյ Կոստանդնի-Շահնազարեանի Հրամայեաց. ընկալնու ղառաջարկեալս ի Կոստանդնէ Մելիք-Շահնազարեանց զպայմանսն՝ արձակել զնա ի պաշտամանէ գիւղատնտեսի Մայր Աթոռոյ ի 1-էն առաջիկայ յունիս ամսեան ըստ այսմ, զի նախ՝ Սինօդս տացէ Կոստանդնի Մելիք-Շահնազարեանց զվկայագիր եռամեայ ծառայութեան նորա ի պաշտաման գիւղատնտեսի Մ. Աթոռոյ և յօժարակամ Հրաժարմանն տպագրելով զայն յԱրարատ ամսագրին Երկրորդ՝ Սինօդս հատուցանէ նմա զմի հազար ռուբլի և թողու անպահանջ զպարաս նորա տպարանի Մ. Աթոռոյ ի գումար եօթն հարիւր Երեսուն և մի ռուբլեաց 32 կ., զոր պատուիրել զանձապահի Սինօդիս գրել յելս ի տումարի Մ. Աթոռոյ, և ըստ յայտարարութեան տեսչի Տպարանի թ. 71 գրել ի մուտս ի նմին տումարի, այլև տալ նմա զըարձեալն յամոյ յամիս ի ռոճկագրամոց նորա զգումար, որ յանձնեալ է ի պահի պետական խնայողական գանձարանի տեղւոյս սկսեալ ի 15-էն փետրուարի 1906 ամի ց 1-ին յունիսի տարւոյս տօկոսեօք. զուօնիկ նորա վասն մայիս ամսոյս և զյիսուն ռուբլիս ի ռոճկէն ապրիլի որ բարձեալ դժանի առ գանձապահն Վահական Կառավարութեան և բաց յայսցանէ զ 17 ռուբլիս ի հաշիւ ծախուց զորս արարեալ է գիւղատնտեան. Երրորդ յայսմհետէ ոչ գիւղատնտես Մելիք-Շահնազարեանցն և ոչ Սինօդս ունին պահանջ ինչ ի միմեանց։

եւ չորրորդ՝ կարգելով զոէր Անտօն վարդապետն կառավարիչ ագարակի Մ. Աթոռոյ պատուիրել նմա ընդունել ի Մ.-Շահնազարեանցէ զամենայն հաշիւս և զգոյս, զմեքենայս և զայլ իրեղէնս ագարակի և զանասունս առանձին ցուցակաւ ի ներկայութեան անդամոյ Վանական կառավարութեան թ. 298.

—Ե նմին աւուր Սինօդ լուեալ զիսնդիր բնակչի 0շական գեղջ վահանայ Ամատունոյ՝ հրամայեաց. զբնակիչն 0շական գեղջ զվահան Ամատունի վարձել ի ժողովել զայքիհարկս, զծխահարկս և զաթոռահաս մասն ամենատեսակ երկրային բերոց յայսմ ամի սահմանելով զժամանակ ծառայութեան նորա ց 1 ապրիլի 1910 ամի այնու պայմանաւ, նախ՝ զի զամենայն ժողովեալ դրամս ի վերջ իւրաքանչիւր ամսոյ առաջի արասցէ Սինօդիս հանդերձ փաստաթղթովքն ի ստուգութիւն, երկրորդ՝ ի վարձ ծառայութեան իւրոյ ունի Ամատունին ընդունեց զ 100% ի ժողովեալ ծխահարկաց և ոյգեհարկաց և զերկու խալուարցորեան վասն կալաչափութեան և երրորդ ի ժամ կալորէից հարկաժողովին իրաւունք են վարձելոյ զերկուս ծառայս, որոց ի վարձ սահմանի երկոցունցն երեսուն ռուբլի: թ. 300

Ե նմին աւուր Սինօդ լուեալ զիսնդիր Մկրտիչ Սարկաւագի Մուրագեան ի 10 մայիսի հրամայեաց զօրագրական վճիռ Սինօդիս որ ի 20 մայիսի թողլով ի զօրութեան, տալ նպաստ Մկրտիչ սարկաւագի զմի հարիւրութիւնի ի դանձարանէ Մ. Աթոռոյ: թ. 304.

—Ե 11 մարտի Սինօդ լուեալ զյայտարարութիւն առաջնորդի թեմին Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիոյ և զգործն հրամայեաց, նախ՝ ունելով առաջի աչաց, զի յայտարարութիւն Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի ի 15 սեպտեմբերի նոյն ամի թ. 228 լինելով կարի վիրաւորական վասն Ատենիս և լիովին ապացուցանելով զըմբոստ վարժունաներսէս արքեպիսկոպոսին, առաջի իշխանութեան իւրոյ՝ արքարե ամփոփին յինքեանս զյանցանո նախատեսեալու

պատժ. օրինաց ցուցեալս ի Պ. Կատար. պար. Պրօկոբօրի, ուստի զյայտարարութիւն և զուղիղ թարգմանութիւն հեռագրին մատուցաննել Նորին Ամենապատըթեան 8. Տեղակալի ի պատշաճ տնօրէնութիւն. Երկրորդ՝ զնախկին որոշումն Սինօդիս ի 15 գեկտեմբերի, որ վասն յաւելման մի հարիւր ռուբլեաց ի շտատ դիւանական ծախուց թողուլ ի զօրութեան և Երկրորդ՝ նկատելով զի թարգմանութիւն հեռագրի Ներսէս Արքեպիսկոպոսի ի 10 հոկտեմբերի (որ ի գործ հաշուար. մասին № 5<sup>o</sup>/908) կատարեալ ի ձեռն հաշուապահի Սինօդիս և ուղղեալ ի ձեռն ատենագիր Յօվհաննիսեանի, չէ համապատասխան ընագրին, որով և փոխի իմաստ նորին, ուստի առաքելով զպատճէն այդր հեռագրի զպիսալ և զուղիղ թարգմանութիւնս նորին, հրաւիրել զուշագրութիւն պ. Կատ. պար. Պրօկոբօրի Սինօդիս յայդ զանցառութիւն Դիւանական պաշտօնէից. թ. 183

ի 1 յունիսի Սինօդ՝ լուեալ զգործ ձեռնադրութեան  
բնակչի Վաղարշապատ գեղջ գաւառին Էջմիածնայ Երուան-  
դայ Աստուածատրեան Մանուկեանց ի քահանայ ծխակա-  
նաց Վարդաշէն գեղջ գաւառին Նուխւոյ, Հրամայեաց.  
Թոյլ տալ Կոնսիստորիային Դարաբաղի ընդունել զբնակիչն  
Վաղարշապատ գէղջ զԵրուանդն Մանուկեան (ընթացաւարտ  
ի Ներսիսեան դպրանոցի) ի հօգեոր կոշումն և առաջա-  
դրել առաջնորդի թեմին ձեռնադրել զնա ի քահանայ  
Վարդաշէն գեղջ գաւառին Նուխւոյ։ թ. 321

— Յ Յունիսի Սինօդ լուեալ զգործ ժողովարարութեան ի կողմանս Սիբիրիոյ ի ձեռն Ընձակ վարդապետի Եաղջեան յօգուտ բանալի որբանոցի յէջմիածին, հրամայեաց, Քննելով զգործ և առաջի աչաց ունելով զարարեալ քննութիւն Սինօդս գտանէ զի Ընձակ վարդապետն յանձնարարութեամբ ի Տէր Հանգուցեալ կաթուղիկոսի առնելով զկամաւոր նուիրատուութիւն՝ բայց ի գումարաց անմիջապէս անտի փոխադրելոց լընկալեալ է անձամբ ի Հասուցանել նորին Սրբութեան 1) ի Վերիսնի Ուդինսկ քա-

զարի 463 ռ., 2) ի Գաւթե Ալթունեանց՝ 150 ռ., 3) ի Զիտայի՝ 175 ռ., և 4) յիրկուտսկի՝ 1235 ռ. ընդ ամենայն 2023 ռուբլի, յորոց ըստ Հայտարարութեան իւրում մատուցեալ է նորին Սրբութեան միայն 1300 ռուբլի, հետեւաբար մնայ առ ինքն 722 ռուբլի ոչ հաշուելով զերկերիւր ռուբլիս, զոր նա ընկալեալ է ի նորին Սրբութեանէ ի ծախս ճանապարհի և զայլ գումարս, զորս ընկալեալ է նորա յայդ պէտս համարեա յամենայն քաղաքս, ուր լինէր նուիրաբերութիւն, բացի ծախուց կեցութեան, զորս նոյնպէս հոգային ծխականքն. վասնորոյ պատուիրել Ընձակ վարդապետի մատուցանել Սինօդիս յընթացս երկուց ամսոց զմեացեալ առ ինքն եօթն հարիւր քսան և երեք ռուբլիսն։ թ. 327.

—ի 5 յունիսի Սինօդ լուեալ զգործ ձեռնադրութեան Սարգիս սարկաւագի Յակոբեան ս, Աստուածածին եկեղեցւոյ Ալէքսանդրապոլի հրամայեաց Յանձն առնել Տ. Սարգիս եպիսկոպոսի Սևանայ ձեռնադրել զՍարգիս սարկաւագն Յակովիբեան յաստիճան քահանայութեան ի հովիւծխականաց Աղուզում գեղջ շրջանին Կարուց։ թ. 336

—ի 5 յունիսի Սինօդ լուեալ զգործ զեղծմանց նախկին գործակալի շրջանին Ապարանայ Աւետիս քահանայի Տէր Յարութիւնեան Միւլքի գեղջ հրամայեաց. Արարեալ, քննութեամբ և նոյն խակ խոստովանութեամբ Աւետիս քահանայի Տէր Յարութիւնեանց ապացուցեալ համարելով զզեղծմաւնս նորա ըստ նախկին պաշտամանն գործակալի Ապարանայ, նախ՝ զԱւետիս քահանայ Տէր Յարութիւնեան զրկել ի քահանայագործութենէ և առաքելի վասն Սևանայ յապաշխարութիւն եռամսեայ ժամանակաւ և երկրորդ պահանջել ի նմանէ զերիս հարիւր ռուբլիս ի փոխարէն աթոռահաս արդեանց, զորս ընկալեալ է նորա ոչ օրինասահման անդորրագրօք պսակահարկաց այնու պայմանաւ, զի եթէ յընթացս երից ամսոց ոչ հատուցէ զպահանջեալ գումարս, ժամանակ ապաշխարութեան շաբունակեցի ցհատուցումն պարտուց։ թ. 337.

Յ 8-ն յունիսի Սինօդ լուեալ զգործ նահանգական

գատարանի Ելիսաւետպոլու վասն մեղադրանաց Աղէքսանդր քահանայի Տէր Յակոբեանց Դում գեղջ հրամայեաց Քննելով զգործ Սինօդս գայ յեզրակացութիւն, եթէ արդարեւ Աղէքսանդր քահանայն Տէր Յակովքեան դիտաւորեալ կերպիւ թագուցեալ է ի պաշտօնական գրութեան իւրում՝ յանուն գործակալին զճշմարտութիւն վասն չհասութեան Սօֆիի Բարայեան ընդ Յաղիի Մարդանեան, սակայն առաջի աչաց ունելով զզառամեալ հասակ մեղադրելոյն (77 ամաց) և զբագւամեայ պաշտօնավարութիւն նորա ի կոչման քահանայի, այլ և զայն, զի պսակ յիշատակեալ անձանց ըստ օրագրի Սինօդիս համարեալ է վաւերական, ուստի մեղադրեալ Աղէքսանդր քահանայն արժանի է ներողամտութեան: թ. 338

— Յ 8 յունիսի Սինօդ լուեալ զգործ ձեռնադրութեան բնակչի Աւգիբէկ գեղջ գաւառին Աղէքսանդրապօլու Խաչատրոյ Մարգսեանց հրամայեաց. ունելով առաջի աչաց զի վկայական ուսման Խաչատրոյ Մարգսեան չէ համապահիան պահանջանաց ծխ կանոնադրութեան, ուստի զմիջամտութիւն Կոնսիստորիային Երևանայ, որ վասն ձեռնադրութեան յիշեալ Մարգսեանցի ի քահանայ թողու առանց հետեանաց: թ. 341.

— Ի 10 յունիսի Սինօդ լուեալ դյայտարարութիւն վարչութեան ձեմարանի յաղագս ինչ ինչ նորոգութեանց ձեմարանի հրամայեաց նախ ի մասնաժողով վասն որոշելոյ առաջեցեաւն զանհրաժեշտ նորոգութիւնս շինութեան ձեմարանի Մ. Աթոռոյ կարգել զտ. Խոհհակ վարդապետն, զպաշտօնակատար տեսչի ձեմարանի և զտնտեսն, յանձնառնել նոցա ուսումնասիրել առ տեղեաւն և կազմեալ մատուցանել Սինօդիս զնախահաշիւ առնելի ծախուց: Եւ երկրորդ՝ ունելով առաջի աչաց զի վարչութիւն ձեմարանի հրահանգեալ ըստ պատուիրանի Սինօդիս նախահաշուով 1907/8 ուս, ամի արդէն վճարեալ է դաստիարակաց զ200 ուուրլի ուստի պատուիրել գանձապահի Սինօդիս տալ վարչութեան ձեմարանի արտաքոյ նախահաշւոյ ուուրլիս Երկերիւր ի վարձատրութիւն դաստիարակաց: թ. 347.

—ի 10 յունիսի Սինօդ լուեալ զյայտարարութիւն Հոգեոր Կառավարութեան Հայոց Հին Նախիջևանի հրամայեաց, թոյլ տալ Հոգեոր Կառավարութեան Նախիջևանի վարձել զսուրհանդակ մի, սահմանելով ռոճիկ մինչ ցերկոտասան ռուբլի յամիսն արտաքոյ նախահաշուոյ: թ. 354

—ի 12 յունիսի Սինօդ լուեալ զգործ ձեռնադրութեան ընակչի Քաւանդի գեղջ գաւառին Շամախւոյ Երեմիայի Գասպարեանց, հրամայեաց ունելով առաջի աչաց, զի թէւ ի Տէր հանգուցեալ Հայրապեան թոյլատրեալ էր քննել զընծայացուու թեմին Շամախւոյ յեկեղեցական ծխական դպրոցի Շամախւոյ առ ի չգոյէ Հոգեոր դպրոցն ի թեմին, սակայն ունելով ի նկատի, զի զարդիս դպրոցն Շամախւոյ, ուր քննեալ է Երեմիա Գասպարեանն, չէ երկդասեան, այլ միգասեան, զնորոդ միջնորդութիւն Կոնսիստորիային Շամախւոյ որ վասն ձեռնադրութեան յիշեալ Գասպարեանցի ի քահանայ, թողուլ առանց հետեւանաց ընդ սմին բացատրելով թեմական Ատենին եթէ ըստ ճիշտ մտաց կոնդակի ի 13 մարտի 1907 ամի թ, 516 մարթ է քննել զընծայացուու յեկեղեցական ծխական դպրոցի Շամախւոյ յայն ժամ և եթ, երբ դպրոցն այն լիցի լրիւ Երկդասեան ըստ գասպարանացն և աւանդելի առարկայից և ոչ անուամբ միայն: թ. 356

—ի 12 յունիսի Սինօդ լուեալ զյայտարարութիւն Կոնսիստորիայի Վրաստանի հրամայեաց. Դարձուցանելով զարձանագրութիւն վասն անհրաժեշտ նորոգութեանց սենեկաց ուխտատեղւոյն Բօլինիսի, թոյլ տալ Կոնսիստորիային Հ. Վրաստանի տնօրինել առնել զնորոգութիւնս ընդ հրակողութեամբ բանիմաց և հաւատարիմ անձին և ընդ պատասխանատւութեամբ թեմական Ատենին, ծախելով զդըրամն ի հաշիւ արդեանց ուխտատեղւոյն վասն այսր ամի յամենայն գէպս ոչ առաւել քան զայդ արդիւնս: թ. 358.

—ի 12 յունիսի Սինօդ լուեալ զգործ նահանգական դատարանին Երևանայ յազագս մեղադրանաց նախկին գործակալի Աշտարակայ Թաղէոս ա. քահանայի Աւետիսեան Աւագեանց և այլոց հրամայեաց. Քննելով զգործն

Սինօդու գտանէ զի նախ՝ Դաւիթ ք. Տէր Եղիազարեան սրպէս և ինքն խոստովան լինի, կասկածելով վասն չափահանութեան Փառանձեմայ ի, զրաշեան՝ ոչ դիմէ ի Կոնսիստորիեան վասն ստուգելոյ զհասակ նորին և կամ առնելոյ զերգմական քնութիւն, եթէ չէր արգարե արձանագրութիւն առ այդ, այլ իբրև հիմնեալ ի բանս մօր և ազգականաց Փառանձեմայ գրէ անարգել յայտարարութիւն վասն պսակի առ գործակալ Աշտարակայ ցուցանելով զՓառանձեմն 14 ամեայ և ոչ հայեցեալ ի նախազգուշացուցումն գործակալի Վաղարշապատայ, կատարէ զպսակն Փառանձեմայ, որ նոյն խոկ չէր իւր ծուխ։ Վասն որոյ Սինօդու եզրակացուցանէ եթէ հարկ է գատել զԴաւիթ քահանայն ըստ 362 և 1575 յօդ. պատժոյ օրինաց և երկրորդ՝ ի պատճառս մահուան թագէսս ա. քահայի Տէր Աւետուեան զըրէտական հետամտութիւն հանդէպ նորա կարճել ըստ կ. 16 յօդ. կան քր. գատավար. թ. 361

—ի 15 յունիսի Սինօդ լուեալ զգործ Տիգրանեան կտակի հրամայեաց. ըստ ճիշտ մտաց կտակի Տիգրանեանի պատուիրել Գանձապահի Սինօդիս նախ՝ զառձեռն տոկոսիս կտակաւանդեալ գրամագլխոյն ցմէկն այսր 1909 ամի ի գումարի մի հազար երկերիւր երեսուն և ինն ուռըլ 21 կ. առաքել առ վարչութիւն ձեմարանի Մ. Աթոռու, ի գործադրութիւն ըստ կտակին, և եկրորդ՝ յայսմհետէ ի դանձել զտոկոսիս գրամագլխոյն անմիջապէս յանձնել զայնս վարչութեան նոյն ձեմարանի, որ պարտաւորէ զգործադրութենէ դրամոցն յամենայն նուագ ըստ ճիշտ մտաց կտակին տեղեակ առնել որպէս զԱտեանս, նմանապէս և զկտակակատար ազքատախնամ Հոգաբարձութիւն Նոր Նախիջևանի. Զայսմանէ ձանուցանել վարչութեան ձեմարանի Մ. Աթոռոյ և զքաղուած օրագրոյս առաքել առ յիշեալ Հոգաբարձութիւն. թ. 364

—ի 15 յունիսի Սինօդ լուեալ զգործ Նահանգական գատարանի Ելիսաւետպոլու յազագս մեղադրանաց Սարդիս ք. Տէր Յովսէփեանց մեծ Սեօդիւթլու գեղջ գաւառին նուխւոյ ըստ 362 յօդ. պատժ. օրինաց, հրամայեաց.

քննելով զգործ՝ Սինօդու դայ յեղակացութիւն եթէ Սար-  
դիս ք. Տէր Յովսէփեան դիտելով զանչափահաս լինելն  
Նախշունի Համբարձումեան, ի յայտարարութեան իւրում  
յանուն գործակալին ցուցանէ զամս հասակի հարսնացուին  
13, որով և ընկալեալ լինի թոյլտուութիւն պատկի և թէե  
ի բայցատրութեան իւրում առէ՝ թէ չգիտէր զանչափահաս  
գոյն Նախշունի և իրազեկ լեալ զայսմանէ ի 22 սեպտեմ-  
բերի 1905 ամի գրէ գործակալին արգելուլ զպսակն, սա-  
կայն ոչ իւիք ապացուցանի այդ, իսկ գործակալն ցուցանէ  
եթէ զերկրորդ գրութիւն մեղադրելոյն ընկալեալ է ինքն  
զինի կատարման պատկին, վասնորոյ զմեղադրեալ Սար-  
դիս քահանայն հարկ է գատել ըստ 362 յօդ. պատժ. օր-  
ջայսմանէ ծանուցանել պրօկուրօրի շրջանային դատարա-  
նի Գանձակայլ, դարձուցանելով գործն: թ. 365.

—ի 24 յունիսի Սինօդ լուեալ զգործ կալուածոյն  
էջմիածնի, որ ի Գեօքքիլիսա հրամայեաց. թոյլ տալ  
կոնսիստորիային Երևանայ կազմել զծրագիր պայմանի,  
որպիսեաւ տուեալ էր ի վարձու Գեօկքիլիսա գիւղն հան-  
դերձ աղչա հողովքն Սարգսի Տէր Գաբրիէլեան, միայն ժա-  
մանակաւ հինգ ամ ի 1-էն դեկտ. տարւոյս ց 1 գեկտ.  
1914 ամի, առնել ըստ այժմ դաճուրդ, կոել զնօտարա-  
կան պայման և զկատարածէն լայտ առնել Սինօդիս: թ. 387.

